

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 3-ին, հինգշաբթի.—Այսօր, կեսօրին, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցում էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Հավարտ ժողովի տեղի է ունենում ճաշկերույթ, որին Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ մասնակցում են նաև Մայր Աթոռի միաբանները:

* * *

Հուլիսի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «յաւուր պատշաճի»:

* * *

Հուլիսի 11-ին, ուրբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

* * *

Հուլիսի 14-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հուլիսի 18-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը եռօրյա հանգստի է մեկնում Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոց և նույն օրը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը:

* * *

Հուլիսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պա-

տարագ է մատուցում նորընծա Տ. Աբել աբդ. Օղլուգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Լոյս ճշմարիտ Քրիստոս Աստուած, առ քեզ հոգի իմ առաւօտէ, ի յերկրի երևեցո ինձ զերեսս քո» (շարական) բնաբանով:

*
* *

Հուլիսի 22-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանում տեղի է ունենում մանկավարժական խորհրդի հերթական նիստ, որին մասնակցում են շուրջ 20 դասախոսներ:

Նիստի ընթացքում տեսչի պաշտոնակատար Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը նախ ամփոփում է 1979—80 ուսումնական տարվա կատարված աշխատանքները և ապա համընդհանուր քննության ներկայացնում գալիք՝ 1980—1981 ուսումնական տարվա ուսումնա-դաստիարակչական ծրագրերը:

Այնուհետև քննարկվում են նաև կազմակերպչական մի շարք այլ հարցեր և ընդունվում համապատասխան որոշումներ:

*
* *

Հուլիսի 24-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա շրջապտույտի են մեկնում Հովհաննավանք և Սաղմոսավանք:

*
* *

Հուլիսի 26-ին, շաբաթ.—Այսօր Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հուլիսի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում նորընծա Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զբարձրեալն զՔրիստոս արասցուք մեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ մեզ չարք և տանջանք մի մերձեսցին ի հարկս մեր» (մաղթանք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «Նորոգ հանգուցեալ» Մայր Աթոռի բարերար, մարսելահայ Արծրուն Ջրբաշյանի հիշատակին:

*
* *

Հուլիսի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մոտ մեկամսյա ամառային հանգստի է մեկնում Կիսլովոդսկի «Կրասնոե կամնի» առողջարան:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթեցին Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Արսեն սրբազանները և Մայր Աթոռի միաբանությունը:

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռ. Պարսամյանը և տեղակալ տիար Ա. Հասրաթյանը:

*
* *

Հուլիսի 31-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա շրջապտույտի մեկնեցին դեպի Սևանա լիճ, Այրավանք և Նորադուզ՝ տեղի խաչքարերը դիտելու համար:

*
* *

Օգոստոսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 7-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա շրջապտույտի մեկնեցին դեպի Ամբերդ:

*
* *

Օգոստոսի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Զագալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ վասն Սրբուհւոյ Աստուածածնի բարեխօսութեամբ, Տէ՛ր, ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ» աղոթք-բնաբանով:

*
* *

Օգոստոսի 14-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա շրջապտույտի մեկնեցին դեպի Հանքավան:

*
* *

Օգոստոսի 17-ին, կիրակի.—Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Լոս-Անջելոսի Ս. Սարգիս եկեղեցու ծիսակատար քահանա Տ. Վարդան քհն. Դյուրգարյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ» արարողությունը՝ նախագահությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

*
* *

Օգոստոսի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 23-ին, շաբաթ.—Այսօր, կեսօրից հետո, Կիսլովոդսկում մոտ մեկամսյա հանգստից հետո, Մայր Աթոռ է վերադառնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ ուղեկցությամբ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանի:

*
* *

Օգոստոսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Խարթումի հոգևոր հովիվ Տ. Օշական քհն. Աշըգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քոյ» (Սաղմոս) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 25-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանում սկսվեցին 1980—1981 ուսումնական տարվա ընդունելության քննությունները:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Կալկաթայի հոգևոր հովիվ Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը:

*
* *

Օգոստոսի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռի միաբանությունը մեկօրյա շրջապտույտի է մեկնում դեպի Սևան, Դիլիջան և Պարզ լիճ:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին են այցելում 14 հայ գաղթօջախներից ժամանած շուրջ 50 հայ ուսուցիչներ, որոնք մայր հայրենիքում են գտնվում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած մեկամսյա դասախոսություններին մասնակցելու համար:

*
* *

Օգոստոսի 31-ին, կիրակի,—Տօն Գիւտի գոտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ, Նյու Յորքի Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցու լուսարարապետ Տ. Խաժակ վրդ. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Աստվածածնի՝ որպես մոր դերի նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: